

# ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԺԷՄԵԱՆ

## «ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ»\* ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Մաթթեոսի Անկարանի նոր թարգմանության երկրորդ գլուխին մեջ ևս կը զըպենք ազապ թարգմանություններ, որոնք կը հնաացնեն նոր թարգմանությունը գրաբար բնագիրեն: Նախորդ մեր յօդուածին մեջ նշած էինք, թէ Մահակ-Մեսրոպեան գրաբար առաջին թարգմանությունը հաւաքարիմ մնացած է յունարէն բնօրինակին և բնաւ չէ արարօնած ինքզինքին փոփոխություններ մըցնել ասարուածաշունչ բնագիրին մեջ: Ինչպէս առաջին գլուխին մեջ, երկրորդին մեջ ևս նկատեցինք հետեւեալ շեղումները յունարէն և հայերէն գրաբար թարգմանութենէն:

Այստեղ առաջին օրինակը Բ. 3 համարին մեջ յաւելումն է «բնակիչները» բառին, որ ոչինչ կ'աւելցնէ նախադասութեան իմաստին: Ներովդէսի մասին բնագիրը կ'ըսէ, թէ ան «խտովեցաւ» (ἐταράχθη), «և ամենայն Երուսաղէմ ընդ նմա», այսինքն «և նոր հեպ ամբողջ Երուսաղէմը»: Թարգմանիչը գրաբար «խտովեցաւ»-ը թարգմանած է նոյն բառով, այսինքն «խտովեց»: Նոր թարգմանության մեջ՝ «խտովեց և նրա հեպ՝ Երուսաղէմի բոլոր բնակիչները» այսինքն խտովեց նախ՝ Ներովդէսը և ապա՝ Երուսաղէմի բոլոր բնակիչները: Իսկ յունարէն ἐταράχθη բառը կը նշանակէ «հրաբանցնիլ, շփոթուիլ» և ոչ թէ՛ յուզմունքներէ անցնիլ: Այս փողերուն մեջ նկարագրուածը Քրիստոսի մուտքն է Երուսաղէմ, նկարագրուած նաև Ծաղկազարդի շարականին մեջ. ուր կը յիշուին «ծերքն ոսպօք ձիթենեօք և փղայքն ոսպօք արմատենեօք», որոնք ուրքի ելած են «երամ երամ» զԱստուած օրհնելու: Բնագիրի ուղիղ թարգմանությունը պիտի ըլլար, թէ «Ներովդէսը և ամբողջ Երուսաղէմը շփոթութեան մարմուեցան...»:

Յաջորդող Բ. 4 համարին մեջ, ուր գրուած է, թէ Ներովդէս իր մօտ կանչեց «գրահանայապետս և զղպիրս ժողովրդեանն». «արխիերես» յունարէն բառը գրաբար թարգմանուած է «գրահանայապետս», որ կ'ակնարկէ հրեայ քահանայապետներուն և ոչ թէ այսօրուան մեր աւագ քահանաներուն: Իսկ յաջորդ բառերը, յունարէն γράμματεις τοῦ λαοῦ, որ պարզապէս կը նշանակէ ժողովուրդին դպիրները (scribes of the people, ըստ The Oxford annotated Bible-ի անգլերէն թարգմանության), դարձած է «օրենքի ուսուցիչներ»:

\* Սկիզբը տե՛ս № Ա, էջ 72:

Յաջորդող Բ. 5 համարին մէջ, ուր արձանագրուած է քահանայապետներուն և դպիրներուն պարասխանը. թէ Յիսուս պիտի ծնի «ի Բեթղեհէն Նրէասփանի: Չի այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին:» Նոր թարգմանիչը բնագրին մէջ աւելցուցած է «Միթէա» անունը, երբ կարելի էր հաւաքարհմ մնալ յունարէն բնագիրին և մարգարէին անունը նշել էջափակին:

Յաջորդող Բ. 6 համարին մէջ, «Բեթղեհէն երկիր Յուդայ», որ ճշգրիտ թարգմանութիւնն է յունարէն *γῆ 'Ιουδα* բնագիրին, «երկիր» բառը դարձած է «քաղաք»: Շարունակութեան մէջ, «ոչինչ կրպսեր ես յիշխանս Յուդայ» գրաբար թարգմանութիւնը յունարէն *οὐδ'αὐτως ἔλαχιστον εἶ ἐν τοῖς ἡγεμόσιν 'Ιουδα* վերածուած է «հռչակով նվազ չես Նուդայի մյուս քաղաքներից»: Բնագիրէն զեղջուած է «յիշխանս» բառը, որով փոխուած է իմաստը: Նոր թարգմանութիւնը կը խօսի Յուդայի քաղաքներու մասին, որոնց մէջ միաներէն նուազ չէ Բեթղեհէնը, մինչդեռ բնօրինակը կը խօսի Յուդայի յիշխաններու մասին: Անգլերէն թարգմանութիւնը՝ *rulers of Judah*:

Բ. 8 համարին մէջ, Ներովդէսի պատուէրն է մոզերուն «Գնացէք սրտզեցէք», որ թարգմանութիւնն է յունարէն *Πορευθέντες ἐξετάσατε ἀκριβῶς*: Նոր թարգմանութիւնը հետևեալն է. «Գնացէք, սրտիզ փողեկություններ քաղելով գրե՛ք երեսային՝ և երբ գրե՛ք՝ փողեկացրէք ինձ»:

Յաջորդող Բ. 9 համարին մէջ՝ *ὁ ἄσστηρ, ὅν εἶδον ἐν τῇ ἀνατολῇ*, որ մեր իմաստուն հայրերու կողմէ թարգմանուած է «աստղն զոր փեսին յարևելս» կրճատուած է և դարձած՝ «Եվ ահա աստղը առաջնորդեց նրանց»: Անհասկնալի է, թէ բնօրինակի «յարևելս» բացատրութիւնը ինչո՞վ խանգարած է նորագոյն թարգմանիչը, մանաւանդ երբ զեղջուած նոյն բառը մտած է յաջորդող համարին մէջ, ուր պիտի չլլար:

Համար Բ. 10 «Իբրև փեսին զաստղն, ինդացին յոյժ ուրախութիւն մեծ» գրաբար բնագիրը ճոխացած է և եղած «Նրանք չափազանց ուրախացան, երբ կրկին փեսան այն աստղը՝ որ փեսել էին արևելքում»:

Բ. 11 համարին մէջ կը հանդիպինք այլ երևոյթի մը: Յունարէն բնագրի *ἐλθόντες* բառը կը նշանակէ «գալով», մինչդեռ մեր թարգմանիչները զայն թարգմանած են «մտին», որ կը նշանակէ թէ յունարէն բնօրինակը, որմէ թարգմանած են մեր առաջին թարգմանիչները, եղած պիտի ըլլայ *ἐνσελθόντες*, որ կը նշանակէ «մտնելով»:

Նոյն համարին մէջ յունարէն *θησαυρούς* բառը, զոր անգլերէնը թարգմանած է *treasures* (նոյն արմատէն), նորագոյն թարգմանիչները թարգմանած են «արկղիկները», մինչդեռ հինները թարգմանած էին «զգանձս»: Անհասկնալի փոփոխութիւն:

Բ. 13 համարին մէջ Յովսէփի մասին գրուած է՝ յունարէն *ἐγερθεῖς*, գրաբար՝ «յարուցեալ», մինչդեռ նորին մէջ՝ «Նովսէփին արթնացալ»:

Բ. 15 համարին մէջ, յունարէն *ἵνα πληρωθῆ τὸ ρηθὲν*, գրաբար թարգմանուած է «Չի լցցի ասացեալն ի Տեառնէ», որ Ա -22 համարին մէջ թարգմանուած է. «որպեսզի կապարովի այն», այստեղ թարգմանուած է «Այսպէս իրականացալ Տիրոջ խոսքը», ապառնին փոխելով անցեալ կապարեալի:

Նոյն համարին մէջ աւելցուած է Ովսիա մարգարէի անունը, որ գոյութիւն չունի ո՛չ յունարէնին և ո՛չ գրաբարին մէջ (այստեղ պէտք է յիշել, թէ ասորական բնագրի մը

մէջ ևս անցնուած է մարգարէին անունը, ըստ Nestle-Alland Novum Testamentum Graece:

Յաջորդ Բ. 16 համարին մէջ *ἐνεπαίχθη* բառը կը նշանակէ «խաբեցաւ» (գրաբար) և ոչ թէ փողոցի հայերէնով «խաղ խաղացին իր հետ»:

Նոյն համարին մէջ *κατὰ τὸν χρόνον ὅν η̅κρίβωσεν παρὰ τῶν μάγων* յունարէն բնագիրը ճշգրիտ թարգմանուած է գրաբարի՝ «ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգոցն»: Նոր թարգմանութիւնը մեկնողական է, երբ կ'ըսէ «Հիսուսի ծննդյան ժամանակը, որ ևս ստուգել էր մոգերից»:

Բ. 22 համարին մէջ *χρηματισθεὶς δε κατ' ὄναρ ἀνεχώρησεν εἰς τὰ μέρη τῆς Γαλιλαίας* ճշգրիտ թարգմանուած է գրաբարի. «և հրաման առեալ ի փեսայիս, գնաց ի կողմանս գալիլէացոց»: Նոր թարգմանիչը կ'աւելցնէ և կը թարգմանէ. «Դրա փոխարէն երազի մէջ իրեն հրամայվածի համաձայն՝ գնաց Գալիլեայի կողմերը»:

Բ. 23 համարին մէջ *εἰς πόλιν λεγομένην Ναζαρέτ*, որ գրաբար ուղիղ թարգմանուած է «ի քաղաքին՝ որ կոչէր Նազարեթ», թարգմանուած է պարզապէս՝ «Նազարեթ քաղաքում»:

Երկրորդ գլուխի վերջին այս համարին մէջ դարձեալ կը հանդիպինք «զի 199ի բան» բացատրութեան, որ ի փարբերութիւն նախորդներէն, ճիշտ է թարգմանուած, այսինքն «որպէսզի իրականանա»:

Երրորդ գլուխի առաջին համարին մէջ *Μετανοείτε ἡγγικεν γὰρ ἡ βασιλεία τῶν οὐρανῶν* յունարէն բնագիրը ճշգրիտ կերպով թարգմանուած է մեր նախնիքներուն ձեռքով. «ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից»: Այս անգամ նոր թարգմանութիւնը ազատօրէն բարոզական է. «Ապաշխարեցեք, որովհետեւ այսպիսով մենք կապարած կ'իյնենք Աստուծո կամքը»:

Գ. 3 համարը նոյնպէս կը հեռանայ յունարէն բնագիրէն և անոր գրաբար ճշգրիտ թարգմանութենէն: Յունարէն բնագիրն է հետևեալը. *ὁ ρηθεὶς διὰ Ἡσαίου τοῦ προφήτου λέγοντος, գրաբարը՝ «զի սա է՝ վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայայ մարգարէի, որ ասէ՝ այլափոխուած է «Այս Հովհաննէսն էր այն անձը, որի մասին Եսայի մարգարեն խոսել էր՝ ասելով»: Յովհաննէս Մկրտիչի խօսքն է փօնի Եսայայի թողած խօսքը, որ վերածուած է հետևեալ արփայարթութեան. "Անապատում կանչողի ձայնն ասում էր":*

Գ. 8 *ποιήσατε οὖν καρπὸν ἄζιον τῆς μετανοίας* յունարէնի գրաբար ճշգրիտ թարգմանութիւնն է՝ «Արարեք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան»: Իմաստը պարզ է: Բնագիրի իմաստը հետևեալն է «Այսուհետև այնպիսի արարք գործեցէք, որն արժանացնէ ձեզ ապաշխարութեան» և ոչ թէ՝ «Այսուհետև գործով յուսյց փվէ՛ք, որ ապաշխարել եք»:

Գ. 9 յունարէն բնագիրը *ἐκ τῶν λίθων τούτων ἐγείραι τέκνα τῶ Ἀβραάμ* թարգմանուած է պարզապէս. «ի քարանցս յայցանէ յարուցանել որդիս Աբրահամի»: Մեր առաջին թարգմանիչները *ἐγείραι* բառը հասկցած են յարուցանել, կանգնեցնել կամ վերականգնել իմաստով և ոչ թէ «քարերից դուրս բերել»:

Գ. 10 համարը *ἦδε δε ἡ ἀξίωτη πρὸς τὴν ρίζαν τῶν δένδρων κεῖται* պարզապես կը նշանակէ «տապարը ծառերու արմարին մօտ կը գտնուի», ինչպէս թարգմանուած է «Զի աւասիկ տապար՝ առ արմին ծառոց դնի»: Իսկ նոր թարգմանութեան մէջ ազարօրէն գրուած է. «Կուցինն ահա պապրասար է կտրելու ծառերն իրենց արմարներին»:

Գ. 15 համարին մէջ կը վերագրենք Գ. 2-ի տարօրինակ մէկ թարգմանութիւնը. «մենք կատարած կլինենք Աստուծոյ կամբը, երբ ապաշխարենք»: Նոյնպէս թարգմանուած է 15 համարի մեջ «զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն», որ ճշգրիտ թարգմանութիւնն է յունարէն բնագիրին, և որ թարգմանուած է անգլերէն. «for thus it is fitting for us to fulfil all righteousness»: Յիսուսի այս խօսքերը պատասխանն են տրուած Յովհաննէս Մկրտիչի ըսելու համար թէ «մենք այսպէսով կատարած կ'ըլլանք ամէն արդարութիւն»: Նոր թարգմանութիւնն է. «որովհետեւ այսպիսով մենք կատարած կլինենք Աստուծոյ արդար կամբը»:

Նման տարօրինակութիւններ կը գտնենք նաև յաջորդ համարին մէջ, ուր Աւետարանիչը կը նկարագրէ Յիսուսի մկրտութիւնը *ἦνεώχθησαν αὐτῶ οἱ οὐρανοί, καὶ εἶδεν, թարգմանուած գրաբար մեծ ճշգրտութեամբ՝ «և ահա բացան նմա երկինք և ետես»*: Նոր թարգմանիչը կրճատած է «նմա» բառը և փոխած իմաստը: Ան կ'ըսէ. «Եվ ահա երկինքը բացվեց, ու նա տեսավ»: Յունարէն բնագիրը և անոր գրաբար թարգմանութիւնը աւելցուցած են «նմա» բառը շեշտելու համար, թէ երկինքը բացուցաւ Աստուածորոյն համար, որպէսզի նա տեսնէ «զեղծին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղանի և գայր ի վերայ նորա»:

Գիտութեան այս դարուն, երբ Ս. Գրոց նորագոյն թարգմանութիւնները կը կատարուին մեծ խնամքով, միակ սկզբունք ունենալով հաւատարիմ մնալ Ս. Գրոց աւանդին, պահելու համար իւրաքանչիւր բառին և նախադասութեան հարազատ իմաստը, կը զարմանանք, որ արևելահայերէն նոր թարգմանութիւն մը կը հրամցուի մեզի, որ չի յարգեր մեր հայրերու թողած աւանդը, որով միշտ հպարտացած ենք:

(Շարունակելի)